ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

----- մարտի 2010թ. N----Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՎԻՐԱԿԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԱԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի NN9-Ա ԵՎ 10-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասին և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքում հողի հարկի, գույքահարկի, հողամասերի վարձակալության և կառուցապատման իրավունքի վարձավճարների /այդ թվում՝ տույժերի և տուգանքների/ օրենքներով, այլ իրավական ակտերով և համապատասխան պայմանագրերով սահմանված կարգով գանձման կազմակերպման և իրականացման լիազորությունները պատվիրակել Երևանի վարչական շրջանների ղեկավարներին:

2. «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «դ», «զ», «թ», «ժ», «ժ» կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ կետով, 40-րդ հոդվածի 3-րդ, 7-րդ, 7-րդ կետերով, 44-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված տեղական տուրքերը գանձելու և թույլտվությունները տալու լիազորությունները պատվիրակել Երևանի վարչական շրջանների ղեկավարներին:

3. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի մասին» N9-Ա և «Երևանի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու մասին» N10-Ա որոշումները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ.ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ « ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՎԻՐԱԿԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԱԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի NN9-Ա ԵՎ 10-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Երևանի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի թիվ, թիվ 9-Ա և 10-Ա որոշումներով Երևանի վարչական շրջանների ղեկավարներին պատվիրակվել են որոշ տեղական տուրքերի գանձման և թույլտվություններ տալու, ինչպես նաև գույքահարկի, հողի հարկի, հողի վարձավճարների գանձման կազմակերպման և իրականացման լիազորությունները: Նշված որոշումների ընդունման համար հիմք էր հանդիսացել Երևան քաղաքի նախկին թաղային համայնքների ղեկավարների աշխատակազմերում անհրաժեշտ մասնագետների և համապատասխան տեղեկատվական բազայի առկայությունը:

Երևանի վարչական շրջանների ղեկավարներին նշված լիազորությունների պատվիրակումը արդյունավետորեն ապահովել է համապատասխան տուրքերի, հարկերի և վճարների գանձումը Երևան համայնքի բյուջե, ուստի առաջարկվում է ընդունել որոշման նախագիծը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՎԻՐԱԿԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԱԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի NN9-Ա ԵՎ 10-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու և Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի NN 9-Ա և 10-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ